ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՇԱՐՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հոմանիշների շարքը լեզվում բառերի և դարձվածների այն խումբն է, որի մեջ մտնող հիշյալ լեզվական միավորները իրար հետ կապված են հոմանշային կապերով կամ հարաբերություններով։ Բայց քանի որ հոմանիշներ կարող են լինել ինչպես բառերը, այնպես էլ դարձվածաբանական միավորները, հետևաբար հոմանշային շարք կարող են կազմել երկու և ավելի բառեր կամ դարձվածաբանական միավորներ, որոնք միմյանց հետ կապված են հոմանշային կապերով։ Հոմանիշների շարքի հիմքում ընկած է միևնույն հասկացությունը նշանակող երկու կամ ավելի բառերի կամ դարձվածների իմաստների մոտություն կամ նույնություն, ինչպես նաև նրանց լրացուցիչ հուզա-արտահայտչական գունավորման և ոճական տարբեր կիրառությունների առանձնահատկություններ։ Այսպիսով, բառերի կամ դարձվածների այն խումբը, որ միավորում է երկու կամ ավելի հոմանիշ բառեր կամ դարձվածներ, կոչվում է հոմանիշների շարք։ Հոմանիշների շարք տերմինից բացի (որն ի դեպ ամենատարածվածն է), բառերի այդ խումբը անվանում են նաև հոմանիշների փունջ կամ հոմանիշների բույն։

Հոմանիշների շարքը իրենից ներկայացնում է պատմականորեն կազմավորված բառերի և դարձվածաբանական միավորների համաժամանակյա խմբավորում, որը համակարգային բնույթ ունի[1]։

Մասնագետների ճնշող մեծամասնությունը (Օ. Ախմանովա, Ա. Եվգենևա, Յու. Ապրեսյան, Ա. Շապիրո, Վ. Ֆավորին, Ա. Լոզենման, Վ. Գրեչկո և ուրիշներ) հոմանիշների շարքի հիմքը, այսինքն նրա գոյության նախապայմանը համարում են այն, որ տվյալ շարքի մեջ մտնող բառերն ու դարձվածները արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց իրարից կարող են տարբերվել կամ իմաստային նրբերանգներով կամ ոճական կիրառությամբ և հուզա-արտահայտչական գունավորմամբ, կամ էլ և մեկով և մյուսով[2]։

Հոմանիշների շարքի գոյության կարևոր, ավելի ճիշտ՝ հիմնական չափանիշը, իմաստաբանականն է, այսինքն՝ լեզվի զարգացման տվյալ փուլում գործող բառերի և դարձվածների հոմանշային կապերը, որոնց շնորհիվ էլ փաստորեն գոյություն ունեն հոմանշային շարքերը։ Հոմանշային շարքերի կայունությունը պայմանավորված է իր հերթին լեզվի զարգացման տվյալ ժամանակահատվածում բառերի և դարձվածաբանական միավորների հոմանշային կապերի ամրության աստիճանով։ Իմաստաբանական չափանիշը, որպես հոմանշային շարքի հիմնական նախապայման, ի վերջո պայմանավորված է լեզվի զարգացման տվյալ էտապում հանրորեն գիտակցվող և հանրորեն ընդունված բառի տվյալ բառային իրական իմաստով, երբ տվյալ բառիմաստին վերաբերող մնա-

---

[1] Տե՛ս Ю. Д. Апресян, Проблема синонима, ВЯ, 1957, № 6, էջ 84—88։
[2] Տե՛ս А. П. Евгеньева, Проект словаря синонимов, М., 1964, էջ 16։

ցած բոլոր շեղումները մերժվում են իբրև անձնական, ոչ իրական արտահայտություններ կամ դրսևորումներ։

Մյուս կողմից, լեզվի բառապաշարի ամբողջության մեջ նրա որևէ շրջանի հոմանիշները, այնուամենայնիվ իրենց մեջ պարունակում են լեզվի զարգացման տարբեր փուլերի շերտավորումները, որպես լեզվի բառային կազմի օրինական և անկապտելի բաղադրամաս։ Բայց միակողմանի կլինի հոմանիշների շարքերի գոյությունը պայմանավորել միայն բառերի և գարձվածների հոմանշային կապերով։ Իրականում այդ կապերը գոյություն չունեն այլ կերպ, քան հոմանշային շարքերի միջոցով, նրանց շնորհիվ։ Հոմանիշների շարքը լեզվում այդ հարաբերությունների գոյության ապացույցն է։ Հետևաբար, լեզվում հոմանշությունը և հոմանշային շարքը փոխադարձաբար պայմանավորված են իրարով։ Հոմանիշների շարքի հիմնական չափանիշը, այնուամենայնիվ, ինչպես նշվեց, իմաստաբանականն է, որի հետ որոշ մասնագետներ սերտորեն կապում են նաև այլ չափանիշներ՝ հոմանիշների փոխադարձ փոխարինելիությունը և կառուցվածքային պայմանավորվածությունը։

Հոմանիշների շարքի մեջ մտնող բառերի և դարձվածների փոխադարձ փոխարինելիությունը կարող է որոշ պայմաններում նպաստել հոմանիշների շարքի կազմության և հոմանիշների սահմանների ճշգրտման հարցերին։ Այդ չափանիշը որոշիչ դեր կարող է խաղալ միայն բացարձակ հոմանիշների կամ նույնանիշների շարքերի կազմության և նրանց շարքերի սահմանները որոշելու համար։ Բայց այն բացարձակ և միակ չափանիշ չի կարող լինել նրբիմաստային հոմանիշների համար, այսինքն՝ այն հոմանիշների համար, որոնք ընդհանուր իմաստի առկայության պայմաններում իրարից որոշակիորեն տարբերվում են նաև զանազան իմաստային նրբերանգներով, հետևաբար և, ոչ բոլոր դեպքերում է հնարավոր դրանց միմյանցով փոխարինելը։ Մյուս կողմից, բառիմաստին սերտորեն առնչվում է նաև բառի բազմիմաստությունը, որը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում հոմանիշների փոխադարձ փոխարինելիության հարցում։ Բազմիմաստ բառը իր ոչ բոլոր իմաստներով է ի վիճակի հոմանշային կապերի մեջ մտնելու մենիմաստ կամ բազմիմաստ բառերի հետ։ Այդ կարգի հոմանիշների իմաստային որոշ տարբերություններին հարում են նաև նրանց ոճական կիրառությունների և հուզա-արտահայտչական գունավորումների տարբերությունները։ Այլևս չենք խոսում այն մասին, որ լեզվի համակարգում այդ կարգի հոմանիշների տեսակարար կշիռը չափազանց մեծ լինելու պատճառով փոխադարձ փոխարինելիության չափանիշը չի կարող շոշափելի դեր խաղալ հոմանիշների շարքի կազմության և նրա սահմանների որոշման գործում։

Կառուցվածքային պայմանավորվածությունը իր տիպերով և բնույթով միատեսակ չի լինում։ Այն կարող է մի դեպքում բխել բառի որոշակի քերականական կարգին պատկանելուց, որով և պայմանավորվում է նրա կապակցական ձևերը ուրիշ բառերի հետ։ Այն կարող է արտահայտվել նաև բայերի խրնդրառության առանձնահատկություններով։ Միաժամանակ կարող է որոշվել ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների կապակցությամբ։

Հոմանիշների փոխհարաբերության մեջ իրենց արտացոլումն են գտնում ոչ միայն այս կամ այն բառա-քերականական, բառակազմական օրինաչափությունները, այլև, վերջին հաշվով, լեզվի իմաստաբանական համակարգերի ավելի ընդհանուր պրոցեսները։ Այդ առումով հոմանիշների խնդիրը ուղղա-

կիորեն կախվածության մեջ է գտնվում բառապաշարի համակարգայնության խնդրի հետ։

Այսպիսով, շարքը լեզվի բառապաշարի ավելի ընդհանուր համակարգային հարաբերությունների կոնկրետ արտահայտությունն է։ Հոմանիշների համակարգայնության հիմնական ապացույցը, ըստ Բ. Վ. Գորնունգի[3], նրանց հոմանշային փակ շարք կազմելն է, որը լեզվի տվյալ համաժամանակյա վիճակի համար տեսականորեն չի կարող ո՛չ ընդլայնվել, ո՛չ էլ կրճատվել, բայց լեզվի զարգացման հետ անխուսափելիորեն փոփոխվում է, ինչպես նոր բառերի երևան գալու և հին բառերի դուրս մնալու պատճառով, այնպես էլ լեզվի կազմում իմաստաբանական հարաբերությունների հետևանքով պահպանվող բառերի շնորհիվ։ Բնական է, որ լեզվի զարգացման տվյալ էտապում հոմանիշների շարքը հարաբերականորեն կայուն է և սերտորեն կապված է բառապաշարի տեղաշարժերի հետ։

Լեզվի բառակազմական և իմաստաբանական փոփոխությունների կոնկրետ դրսևորումները հոմանիշների հարաբերության, հոմանշային կապերի և գործնականում նաև հոմանիշների շարքերի մեջ հիմնականում կատարվում են նախ և առաջ՝ տվյալ փուլում լեզվի բառային կազմում կատարվող փոփոխությունների շնորհիվ։ Լեզվի բառապաշարի քանակական փոփոխություններն արտահայտվում են նորաբանությունների երևան գալու և որոշ բառեր լեզվական շրջանառությունից դուրս մնալու միջոցով։

Լեզվում բառակազմական պրոցեսներին զուգընթաց կամ էլ դրանց հետ սերտորեն կապված՝ գործում են նաև իմաստաբանական պրոցեսները, որոնք նույնպես մեծ չափով ներգործում են հոմանշային կապերի, հոմանիշների շարքերի առաջացման կամ քայքայման վրա։ Այդ ազդեցություններն արտահայտվում են բառիմաստի զարգացման բոլոր տեսակների՝ բառիմաստի ընդլայնման, բառիմաստի նեղացման, համաբանության, մեկ ուղղությամբ իմաստների զարգացման և այլ եղանակներով, ինչպես նաև բառի մեջ նոր իմաստների առաջացման և եղած իմաստների վերացման կամ մթագնման ձևերով։ Մյուս կողմից, հոմանշային շարքերի փոփոխմանը նպաստում է նաև հին բառերի և իմաստների լեզվական գործածությունից դուրս մնալու հանգամանքը։

Քանակական տեսակետից հայերենում հոմանիշների շարքի նվազագույն սահմանը երկու հոմանիշներն են։ Հոմանիշների շարքը կարող է լինել երկանդամ և բազմանդամ։

ա) Երկանդամ հոմանիշների շարք. Դրանք հայերենում համեմատաբար ավելի սակավ են. օր. ալոգիզմ-հակատրամաբանականություն, ամպերմետր-ամպերաչափ, աղցան-սալաթ, ալրաբնդիռ-ալրամիջատ և այլն։ Ինչպես բերված օրինակներից էլ երևում է, բառային հոմանիշներով կազմվող երկանդամ շարքերը կազմվում են հիմնականում նույնանիշներից։ Բառերի ծագման տեսակետից զրանց ճնշող մեծամասնությունը կազմվում է, ըստ երևույթին, նորագույն փոխառյալ բառի և նրա հայերեն նորակազմ համանշանակի միջոցով, որ լեզվում զեռևս լայն տարածում չի գտել։ Սովորաբար այդ կարգի շարքերի հոմանիշների միջև պայքար է գնում մինչև դրանցից մեկի հաղթանակը։ Հետևաբար, հոմանիշների այդ շարքերը լեզվի զարգացման տվյալ փուլում

[3] Б. А. Горнунг. О природе синонимии в языке и теоретических предпосылках составления синонимических словарей. ВЯ. 1965. էջ 89—99։

ժամանակավոր բնույթ են կրում։ Հոմանիշների երկանդամ շարքերից կայուն, անշուշտ, հայ գրական լեզվի և գավառական բառերով կազմված փնջերն են։ Հայերենում ավելի տարածված պետք է համարել նաև դարձվածաբանական միավորներով կազմվող հոմանիշների երկանդամ շարքերը։

բ) Հոմանիշների բազմանդամ շարքեր։ Արդի հայերենում ավելի ճոխ են հոմանիշների բազմանդամ շարքերը, որ վկայում է հայոց լեզվի իմաստաբանական համակարգում հոմանշային կապերի հարաբերության և բազմազանության մասին։ Դրանք հայերենում կազմվում են երեք և ավելի հոմանիշ բառերից ու դարձվածաբանական միավորներից։ Բացառիկ դեպքերում միայն՝ շարքում հոմանիշ բառերի և դարձվածաբանական միավորների թիվը հասնում է մի քանի տասնյակի։ Համենայն դեպս, արդի հայերենում հոմանիշների շարքի միջինը տատանվում է 8—10 հոմանիշների միջև։ Բերենք բազմանդամ հոմանիշների շարքերից մի օրինակ. մեռնել,— վախճանվել, անշնչանալ, անէանալ, դիանալ, փխր. ննջել, հանգ(չ)ել, հանգստանալ, անցնել (աշխարհից), շունչը փչել, հոգին տալ, մահկանացուն կնքել, աստղը խավարել, արևը խավարել, արևը մարել, գերեզման իջնել, շիրիմ զրկել, գետնի տակն անցնել, սև հողը մտնել, սև հողի բաժին դառնալ, ծուխը մարել և այլն, և այլն։

Սովորաբար, բազմանդամ հոմանիշների շարքեր են կազմում իմաստով և ոճական կիրառություններով նրբերանգային տարբերություններ ունեցող հոմանիշները։

Որակական տեսակետից հոմանիշների շարքերի առանձնահատկությունն այն է, որ նրանք կազմվում են ինչպես բառերով, այնպես էլ դարձվածներով առանձին-առանձին և խառն՝ հոմանիշ բառերով և դարձվածներով միասին։

Որպես օրենք, հայերենում հոմանիշների շարքի մեջ միավորվում են միայն նույն խոսքի մասին պատկանող բառային միավորները։ Այս կանոնը երբեմն կարող են խախտել փոխանունաբար հանդես եկող հայերենի որոշ խոսքի մասերը. օր. զրո թվականը գոյականաբար գործածվելիս՝ հոմանշային կապերի մեջ է մտնում ոչնչություն գոյականի հետ և այլն։

Ըստ կառուցվածքի, այսինքն՝ հոմանշային հարաբերությունների բազմազանության, ամենապարզն ու հասարակը միայն նույնանիշ բառերով կազմված շարքն է. կամ էլ՝ հոմանշային բարդ շարքի մեջ նույնանիշների խումբն է, որ դուրկ է իմաստային և ոճական տարբերությունների վրա հիմնված բարդ կապերից։ Հոմանիշների բազմանդամ շարքի մեջ նույնանիշ բառերը խմբվելով միասին, փաստորեն, առանձին անցման օղակ են ծառայում հոմանիշների ամբողջական շղթայի մեջ։

Հոմանիշների պարզ շարքեր հայերենում կազմվում են հիմնականում լեզվի միայն գրական բառերի, գրական լեզվի արևելահայ և արևմտահայ ճյուղավորումներին պատկանող բառերի, գրական բառերի և փոխառությունների, գրական և գավառական բառերի և միայն գավառական բառերի նույնանիշներից, այսպես՝

ա) Գրական բառերից կազմվող նույնանիշների շարքեր. օր. ականակիրականանավ, ականահարել-ականակոծել, ամբողակ-պնդողակ, մանեկ, անաղկլայեկ, այցատոմս-այցաքարտ և այլն։

բ) Գրական լեզվի արևելահայ և արևմտահայ ճյուղավորումների բառերից կազմվող նույնանիշների շարքեր. օր. սպիտակ-ճերմակ, գեղեցիկ-աղվոր,

վատ-գեշ, ազգ-ցեղ, պաղպաղակ-սառնանույշ, սաոր-պաղ, հեռուստացույց-հեռատեսիլ, տիեզերաղնաց-աստղանավորդ և այլն։

գ) Գրական և փոխառյալ բառերի նույնանիշներից կազմվող շարքեր. օր. ալարաստր-լսնակուճ, ջրակուճ. ականառումբ-ֆուղաս. բաժնետոմս, բաժնեթուղթ-ակցիա. ակուստիկա-ձայնաբանություն. ամոնյակ-ավշակախեժ, անուշադր, անուշադրակ. իդեոլոգիա-դաղափարաբանություն, գաղափարախոսություն և այլն։

դ) Գրական և գավառական նույնանիշներից կազմվող շարքեր. օր. Արուսյակ-Աստղիկ, Այգաստղ, Լուսաբեր, Լուսաստղ, Գիշերավար, Եղջերու, Լուսատու աստղ, Երեկոյան աստղ, Առավոտյան աստղ, (բրբ.) Քաբվանկորուստ, Քարվանկոտրուկ, Քարվանի աստղ (Վեներա) և այլն։

ե) Գավառական բառերի նույնանիշներից կազմվող շարքեր. օր. ակիշ-ակիշթաթ, թաթ, թաթակիշ, տաշտաքեր, տաշտաքերիշ (խմորի տաշտը քերելու երկաթե փոքր գործիք), կամ՝ ամոլ (ամբոլ), եղնամոլ (եղնամոլիկ), լուծք. հարկինք (լուծը միասին քաշող). ավելատուն-հորքատակ, հորիքսետև, մկրնտուն, փոշետուն (գութանի վեցերորդ լուծը) և այլն։

Նույնանիշների բերված շարքերից երևում է, որ՝ ա) Քանակական տեսակետից շարքը ընդհանուր առմամբ բաղմանդամ չէ, երբ այն վերաբերում է գրական լեզվի բառերին։ Այդ դեպքում այն երկու կամ երեք հոմանիշներից է կազմվում։ Համեմատաբար շարքը բաղմանդամ է դառնում, երբ կազմվում է միայն գավառական բառերից։ Այդ բնական է, որովհետև շարքում կենտրոնանում են, փաստորեն, հայերեն բազմաթիվ բարբառների գավառական բառերը։ բ) Բառերի խոսքի մասային պատկանելիության տեսակետից նույնանիշների շարքերի առանձնահատկությունն այն է, որ դրանք կազմվում են գերազանցապես գոյականներով, ավելի սակավ՝ ածականներով և խոսքի մնացած մասերով։ Համարյա բացակայում են բայերով կազմվող շարքերը։ Այդ վերջին հանգամանքը բխում է նույնանիշների կազմության բառա-քերականական առանձնահատկություններից։

գ) Բառերի գործածության տարբեր ոլորտներին պատկանելու տեսակետից նույնանիշային հարաբերությամբ կազմված շարքերը առավելապես կազմվում են տերմինաբանական բառերից, առտնին զանազան հարաբերությունների հետ կապված կենցաղային, գյուղատնտեսական զանազան գործիքների անուններից և, միայն արևելահայ և արևմտահայ լեզուների նույնանիշների դեպքում՝ լեզվի սովորական բառերից։ Նույնանիշների վերոհիշյալ առանձնահատկությունների շնորհիվ հիմնականում բացառվում է հոմանիշների շարքում հիմնաբառի կամ գերապատվելի բառի (դոմինանտ) հարցը։

Վերոհիշյալ առանձնահատկությունների տեսակետից բոլորովին այլ պատկեր է ներկայացնում համանիշների շարքը։ Այդ վերջինս ընդհանրապես հարուստ է իր անդամների իմաստային, բառա-քերականական, հուզա-արտահայտչական և կիրառական զանազան կապերով ու առանձնահատկություններով, ինչպես նաև շարքի քանակային կազմությամբ, օր. Հին-հնամենի, հնօրյա, հնագույն, հինավուրց, վաղեմի, վաղնջական, նոյի տարվա. կամ՝ սպիտակ-սպիտակագույն, սպիտակաթույր (սպիտակին տվող)՝ սպիտակավուն, սպիտակերանգ, սպիտակորակ, ճերմակ (արևմտհ.), ճերմակագույն, ճերմակաթույր, ճերմակերանգ, ճերմակորակ, ճերմակավուն, կաթնագույն, կաթնաթույր, կաթներանգ, կաթնավուն, կաթնորակ, (խսկց.) ճիպ-ճերմակ, սիպ-սիպ-

տակ (ամբողջապես), սպիտակահեղց (գրք.). կամ՝ ձի-հովատակ, որձաձի, փահլ (հնց.), զամբիկ, ճակ, ճայիկ, սարակ, մատակաձի, նժույգ, արշավաձի, ոահվար (հնց.), հեծելակ (հեծնելու), զրաստ (բեռնակիր), երիվար, ասպ (հնց.). տեսակները՝ (հնց.) անղրուար (խոշոր), բոչո (մանր), վարգաձի (կառքին լծվող), սևավ (գրբ.), ճերմակ (սպիտակ ձի), աշխետ (շիկագույն ձի), ճանճկեն (սև և սպիտակ), ճարտուկ (սպիտակ՝ սևախայտ), կոստնտոտիկ (սպիտակախայտ ոտքերով), արաբիկ (արագընթաց), պաշո (բրբ.)(սպիտակ), մատակախազ, մատակախանձ (չմալած), քածավարոտ, թազամսավոր (մալած). կամ՝ վախենալ-երկյուղել, սոսկալ, զարհուրել, սահմռկել, քստմնել, երկյուղածել (մարդուց ի նշան հարգանքի), ահաբեկվել (մարդու կողմից), (փխբ.) դողալ, սարսռալ, փշաքաղվել, ցնցվել, երկնչել (գրք.), սիրտ չանել, զարղանդել, լեղին ճաքել, ահր սիրտն ընկնել, սիրտը փորն ընկնել, թուքը ցամաքել, լեղին չորանալ, լեղուն ցամաքել, ջանը դող ընկնել, ձայնը փորն ընկնել և այլն։ Նույնանիշների համեմատությամբ հոմանիշների շարքերը քանակական և կառուցվածքային-որակական տեսակետից հետևյալ առանձնահատկություններն ունեն։

ա) Քանակական տեսակետից համանիշների շարքերը ավելի հարուստ են, քան նույնանիշներինը։ Այստեղ երկանդամ և ընդհանրապես սակավանդամ շարքերը բացառություն են կազմում։ Հոմանիշների իմաստա-ոճային բազմադան հարաբերությունների հետևանքով շարքն անհամեմատ ճոխանում և բազմանդամ է դառնում։

բ) Համանիշների շարքը կազմության տեսակետից նույնպես տարբերվում է նախորդից. եթե այն դերադանցապես կազմվում էր միայն բառերից, այստեղ արդեն երևան է գալիս նաև լեզվի դարձվածաբանական հարստությունը։ Ըստ որում, հոմանիշների շարքեր կազմվում են նաև միայն դարձվածներից։ Միայն դարձվածներով կազմվող հոմանիշների շարքը ընդգրկում է իրենց կառուցվածքով նախադասությանը համարժեք դանադան տիպի դարձվածաբանական միավորներ, որոնք լեզվում հանդես են գալիս առածների, ասացվածների, թևավոր խոսքերի ձևով. օր. Նման ոնմանն դտանի (ճանաչի) և խուփը գլորավ դտավ պուտուկը (կամ կճուճը). կամ՝ մի ծաղկով գարուն չի դա, մի ձեռքը ծափ չի տա և այլն։

գ) Համանիշների տվյալ շարքերի միջոցով խոսքի բոլոր մասերը լայն հնարավորություն են ստանում դրսևորելու իրենց բազմադան և բազմապիսի կապերը, այսինքն՝ այս դեպքում ավելի հստակորեն է արտահայտվում խոսքի բոլոր մասերի հարաբերակցությունը արդի հայերենում։ Ըստ որում, այս դեպքում համեմատաբար շատ են գոյականներով, բայերով, ածականներով կազմվող շարքերը։ Այս վերջին հանդամանքը պայմանավորված է հայոց.լեզվի բառապաշարում խոսքի մասերի քանակական հարաբերության և բառային կազմում դրանց տեսակարար կշռի հետ։

դ) Իմաստաբանական կապերի տեսակետից խիստ բազմադան են շարքի մեջ մտնող համանիշների հարաբերությունները։ Համանիշների այդ իմաստային կապերի բազմազանությամբ էլ վերջին հաշվով պայմանավորված է նրանց՝ որպես լեզվական համակարգի ճոխությունն ու հարստությունը։

Շարքի մեջ մտնող համանիշների իմաստային կապերը իրենց արտահայտությունն են գանում այլևայլ ձևերի և եղանակների մեջ։

Դրանցից առաջին հերթին անհրաժեշտ է նշել բառի մենիմաստությունը և բազմիմաստությունը։ Մենիմաստ բառերի հոմանշային կապերի բնույթը համեմատաբար պարզ է։ Այդ կարգի բառերը հոմանշային հարաբերության մեջ են մտնում նույնատիպ բառերի կամ բազմիմաստ բառերի որևէ մեկ իմաստի հետ։ Այդ տեսակետից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում բազմիմաստ բառերը։ Դրանք, սովորաբար, հոմանշային կապերի մեջ են մտնում կամ իրենց բոլոր իմաստներով, կամ իմաստներից մի քանիսով, կամ էլ, պարզապես, մեկ իմաստով։ Ըստ որում, բազմիմաստ բառերը իրենց տարբեր իմաստներով հոմանշային կապերի մեջ մտնելով այլևայլ բառերի և գործածական միավորների հետ, վերջիններիս հետ էլ կազմում են առանձին հոմանշային շարքեր։ Այնպես որ, միևնույն բազմիմաստ բառը իր իմաստների համապատասխան կարող է հանդես գալ բոլորովին տարբեր հոմանիշների շարքերում։

Համանիշների շարքի իմաստաբանական առանձնահատկություններից ամենահիմնականը, սակայն, դրանց մեջ իմաստային որոշ տարբերությունների այսպես կոչված նրբիմաստների կամ իմաստային նրբերանգների առկայությունն է, որով և պայմանավորվում է համանշային իմաստների ամբողջ հարստությունը։ Վերոհիշյալ իմաստային տարբերությունները կարող են հանդես գալ բազմազան ձևերով և չափերով և դրանց կոնկրետ սահմանները որոշելը խիստ դժվար է։ Իմաստային այդ տարբերությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք վերաբերում են մեկ հասկացությանը։ Իմաստային տարբերությունները պետք է վերաբերվեն միևնույն հասկացությանը, այլապես առաձգական կդառնան բառերի միջև հոմանշային կապերը և հոմանիշների դռները լայնորեն կբացվեն միևնույն հասկացությանը չպատկանող բառերի առջև։ Համանիշների շարքի մեջ բառերի իմաստային տարբերությունները կարող են արտահայտվել բազմազան ձևերով։

ա) Իմաստի նրբերանգային տարբերություններ, որոնք ցույց են տալիս գործողության տարբեր աստիճանները, տարբեր ձևերն ու եղանակները, ինտենսիվությունը և այլն. օր. խնդրել-հայցել, աղաչել, աղերսել, թախանձել, պաղատել և այլն. կամ՝ լալ-արտասվել, հեկեկալ, հեծկլտալ (ցածրաձայն), ողբալ, կոծել, կականել (բարձրաձայն), կամ՝ ծիծաղել-խնդալ, ժպտալ (թեթևակի), հոհոալ, կլկլալ, քրքջալ (բարձրաձայն), ճխալ (ուրախությունից), փոթկալ, փոթկացնել (հանկարծակի), ատամները ցույց տալ (անշնորհք) և այլն։

բ) Որակի տարբեր աստիճանները ցույց տվող հոմանիշներ. օր. լավ, հիանալի, սքանչելի, զմայլելի, սխրալի, զարմանալի և հրաշալի, հոյակապ, շնաշխարհիկ, անզուգական և այլն։

գ) Վերացական և թանձրացական (կոնկրետ), ընդհանուր և կոնկրետ հարաբերություններ ցույց տվող համանիշներ. օր. ապրել և գոյություն ունենալ, կամ՝ նայել-հայել, գիտել, տեսնել, աչքը շոել և այլն։

դ) Համանիշներ՝ իմաստի ավելի լայն և ոչ լայն ծավալով. օր. հագուստ-շոր, զգեստ և համազգեստ (հատուկ, ըստ զբաղմունքի և ծառայության). կամ՝ բարձունք, բարձրություն և կատար, գագաթ և այլն։

ե) Համանիշներ, որոնք տարբերվում են որևէ հատկանիշի տարբեր աստիճաններով. 1. Մեծությամբ. օր. Մեծ-խոշոր, հսկա, վիթխարի, ահռելի և այլն. 2. Գույնով, օր. կարմիր-ալ-կարմիր, կարմրավուն, կարմրաժեռ, կարմրերանգ

(կարմրին տվող), շառագույն, բոցագույն, ատրագույն, հրագույն և այլն. 3. Ջերմաստիճանով. օր. գոլ-տաք, ջերմ և այլն։

գ) Միևնույն առարկայի, երևույթի տարբեր տեսակները, սեռերը, ձևերը, արտահայտությունները ցույց տվող համանիշներ։ Օր. քամի-հողմ (ուժեղ), հով, զով, զեփյուռ, սյուք (արևմտհ.) (մեղմ), հյուսիս, բուք (ցրտաշունչ, ձյունախառն), սամում (ուժեղ, անապատային), վիշապ, թաթառ (ուժեղ), հարավ, խորշակ (տաք) և այլն. կամ՝ այծ-քաղ, քոշ, նոխաղ (արուն) և այլն։

է) Համանիշներ, որոնք չեն համընկնում իրենց արտահայտած հասկացության ծավալի լայնությամբ, օր. արտիստ և դերասան (ավելի նեղ, թատերական), նկարիչ (ընդհանուր)-գեղանկարիչ (ընդհանուր, մեծ մասամբ որոշ թեմատիկայով նկարող), ծովանկարիչ (միայն ծովային տեսարաններ նկարող), բնանկարիչ, դաշտանկարիչ (բնության տեսարաններ նկարող) և այլն։

ը) Միևնույն առարկան, երևույթը տարբեր հատկանիշներով արտահայտող համանիշներ, օր. Աստված-Արարիչ, Տեր, Ստեղծող, Հաստիչ, Հայր, Ամենակալ, Արքա երկնից, Երկնային թագավոր, Երկնային դատավոր, Բարձրյալ, Երկնավոր, Երկնակալ, է, Ամենաստեղծ և այլն։

Մենք այստեղ բերեցինք միայն իմաստային ամենարնդհանուր կապերն արտահայտող համանիշների շարքերը։ Իրականում այդ կապերը շատ են ու բազմազան և, փաստորեն, դրանք յուրաքանչյուր հոմանշային շարքում իրենց կոնկրետ դրսևորումն են ստանում։ Իմաստային այդ բազմազան կապերով էլ պայմանավորված է հայոց լեզվի հոմանշային հարստությունը։

Հոմանիշների շարքերի մեջ իրենց արտահայտությունն են գտնում նաև բառերի և դարձվածաբանական միավորների ոճական, հուզա-արտահայտչական դունավորման, լեզվական տարբեր շերտերին և կիրառության տարբեր ոլորտներին պատկանելու, ինչպես նաև բառերի կապակցության զանազան առանձնահատկությունները։

ա) Լեզվում բառերի ըստ կիրառության տարբեր ոլորտների պատկանելիության, հոմանիշները (համանիշները և նույնանիշները) կազմում են համապատասխան շարքեր։ Այսպես, գիտության և տեխնիկայի, ինչպես նաև հասարակական-քաղաքական տարբեր բնագավառներին վերաբերող տերմիններն ու բառերը ըստ առանձին մասնագիտության, կազմում են ինքնուրույն, առանձին շարքեր. օր. աթեիզմ-անաստվածություն, անաստվածապաշտություն, աստվածամերժություն (փիլիսոփայական), կամ՝ էթիոլոգիա-պատճառագիտություն (բժշկություն), էլեգիա-եղերգ, եղերերգ, սգերգ, ողբերգ (գրականություն), կամ՝ էլեկտրաուժաչափ-էլեկտրադինամոմետր (տեխնիկական), կամ՝ բոնցքամարտիկ-կոփամարտիկ (մարզական) և այլն։

բ) Հոմանիշների շարքում լայն չափերով արձանագրվում են բառերի և դարձվածների լեզվի տարբեր ոճերին և շերտերին պատկանելու փաստերը։ Այսպես, հոմանիշների նույն շարքում ընդգրկվում են ինչպես գրական բառապաշարին՝ արևելահայերենին և արևմտահայերենին, այնպես էլ բարբառներին, հնացած, հազվադեպ գործածական և այլ շերտերին, ինչպես նաև գրական լեզվի տարբեր ոճերին՝ գրքային, բանաստեղծական, խոսակցական և այլն պատկանող բառերն ու դարձվածները. օր. Բամբասանք-հերյուրանք, գրպարտություն, չարախոսություն, բանսարկություն (գրական լեզվի բառերից), ասեկոսե (խոսակցական), բսի-բսավ (արևմտահայերեն), բամբասողություն, չարաբանություն, քսմսություն (հնացած), ճոշանք, կուկոց (բարբա-

ռային), կամ՝ պանդուխտ-թափառական, գաղթական, վտարանդի (բռնի կերպով), օտարական (դրական), աստանդական, նժդեհ (գրքային), տարաշխարհիկ (հագվադեպ գործածվող), ղարիբ (բարբառային), կամ՝ գեղեցիկ-գեղեցկուհի (աղջիկ), գեղանի, գեղուհի (գրքային), սիրուն, սիրունիկ (խոսակցական), աղվոր, աղվորես (արևմտահայերեն), խորոտ, խորոտիկ, ոինտ, ոնտիկ, շարմաղ, շարմաղերես, թաղլան, արմադան (բարբառային) և այլն։

գ) Հոմանիշների շարքերի մյուս կարևոր առանձնահատկությունը հուզա-արտահայտչական գունավորումն է, որն իր արտահայտությունն է գտնում շարքը կազմող անդամների, այդ թվում և բառերի ու դարձվածաբանական միավորների մեջ։

Հատկանշական է, որ միևնույն շարքի մեջ կարող են երևան գալ և գրական և բացասական գնահատությունները, բառերին տրվող միանգամայն տարբեր, անգամ հակադիր գունավորումները, ինչպես՝ փաղաքշական, գոեհկաբանական, հեգնական, ծաղրական, արհամարհական, նախատական և այլն։ Այսպես օրինակ՝ նախատել-պարսավել, թուք ու մուր անել, կերածը բերնովը ետ բերել (գոեհկաբանություն). կամ՝ նիհար-(հեգնական)՝ միսկարոտ, տանձի կոթ, ցամաք ձորի աղվես, ասեղ կուլ տված, (արհամարհական)՝ մի ծամելու միս չունեցող, քիթը բռնես՝ հոգին դուրս կգա և այլն. կամ՝ մեռնել-վախճանվել, հոգին ավանդել, մահկանացուն կնքել (գրքային), հրեշտակների հետ խոսել, աստծու մոտ գնալ և այլն (դրական վերաբերմունք՝ հանգուցյալի նկատմամբ) և սատկել, շան սատակ լինել, ոտները (նալերը) տնկել և այլն (արհամարհական, նախատական գունավորմամբ) և այլն։

Հուզա-արտահայտչական գունավորումից զուրկ են միայն տերմինաբանական արժեք ունեցող բառերը։ Մնացած բոլոր դեպքերում համանիշները և անգամ նույնանիշների որոշ մասը օժտված են վերոհիշյալ գունավորմամբ։ Հուզա-արտահայտչական գունավորումներով առանձնապես հարուստ են հայերենի դարձվածաբանական միավորները, որոնք էլ հիմնականում այլևայլ գունավորմամբ հարստացնում են հոմանիշների շարքերը։

Հոմանիշների շարքերի հարստությունը դրսևորվում է նաև նրա անդամների՝ առանձին հոմանիշ կամ նույնանիշ բառերի ֆունկցիայով, շարահյուսական տարբեր կիրառություններով, բառերի այսպես կոչված կապակցական ունակություններով։ Օրինակ, հետևյալ հոմանիշների շարքը. Մեծ,— 1. խոշոր, հսկա, հսկայական, ածգահա, ահռելի, ահագին, վիթխարի, (բարբառային)՝ բետ, կոլլո, ջոջ, կոմբ, մեծկակ, մեծղի, տղման։ 2. Ականավոր, նշանավոր, ակնառու, աչքի ընկնող (մարդ, գործ)։ 3. Ընգարձակ, ընգարձակածավալ, լայնածավալ (տարածություն)։ 4. Բարձր, վեհ, վսեմ (գաղափար)։ 5. Սաստիկ, ուժգին, գորեղ։ 6. Շատ, բազմաթիվ։ 7. Գլխավոր։ 8. Ավագ, երեց (եղբայր, քույր)։ 9. Տարիքավոր, մեծահասակ (մարդ)։ 10. Պաշտոնյա։ 11. գ. (հոգն., մեծեր), նախնիք, մեծունանք (հնց.) և այլն։

Մեծ բազմիմաստ բառը իր տասնմեկ իմաստներով հոմանշային բարդ կապերի մեջ մտնելով, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տարբեր ձևերով է դրսևորվում մեծ բառի և նրա բոլոր հոմանիշների կապակցականությունը։ Այսպես, իր առաջին իմաստով, առաջին շարքում մեծ բառը հանդես գալով ծավալային հատկանիշով, փաստորեն իր մեջ առնում է այդ շարքի բոլոր հոմանիշների ֆունկցիաները առանձին-առանձին, մինչդեռ շարքի յուրաքանչյուր հոմանիշը այդ նույն հատկանիշներով չի օժտված և այլ բառերի հետ

ունեցած կապակցության սահմաններն ու աստիճանները ավելի սահմանափակ են. օր. մեծ տուն՝ մարդ, քար, սար և այլն, բայց խոշոր կենդանի կամ մարդ, այնինչ՝ խոշոր տուն, սար և այլն հնարավոր չէ, կամ՝ հսկա մարդ, բայց չի կարելի հսկա սար՝ քար՝ տուն և այլն. հսկայական դործ՝ աշխատանք, բայց ոչ՝ մարդ, տուն, սար, քար և այլն։ Կապակցելիության տեսակետից ընդհանուր արմատ ունեցող բառերն անդամ իրարից տարբերվում են։ Անցնենք նույն շարքի հաջորդ հոմանշին. ածդահա բառը կարող է առնչվել միայն մարդ և հասակ ցույց տվող բառերի հետ, ածդահա մարդ կամ հասակ և այլն։ Նրա կապակցելիության կարողությունները խիստ սահմանափակ են. ահռելի բառը կապակցվում է, կարծեք թե, միայն վիճակային հարաբերություն ցույց տվող բառերի հետ. ինչպես՝ ահռելի դժվարություն և այլն։ Ահագին համանիշը առնչվում է ծավալային, քանակային մեծություն ցույց տվող բառերի հետ, ինչպես՝ ահագին քար, փող և այլն։ Նույն չափով նաև վիթխարի, մեծդի և մնացած բոլոր համանիշները. օր. վիթխարի հաջողություն, վիթխարի նշանակություն և այլն։ Այսպիսով, հոմանիշների շարքի անդամները հանդես են դալիս իրենց իմաստային, ոճական և ֆունկցիոնալ բաղմաղան և իրարից տարբեր դրսևորումներով, որով և պայմանավորված է նրանց իմաստային, ոճական և կիրառական հարստությունը։

Հոմանիշների շարքին դուդրնթաց, ոմանք ընդունում են նաև հոմանիշների ամպլիտուդան (լայնույթ կամ տատանակետ)[4]։ Այս վերջինս հոմանիշների սովորական շարքից տարբերվում է նրանով, որ ամպլիտուդայի անդամները տարբերվում կամ հեռանում են աստիճանաբար, հաճախ՝ միջանկյալ օղակների միջոցով. այսինքն՝ հոմանիշները շարքի դլխաբառից կարող են հեռանալ կամ հոմանիշի շարքի մյուս անդամներից կարող են իմաստային որոշ աստիճանականությամբ տարբերվել. օր. ննջել-քնել-մրափել. կամ՝ ժպտալ-ծիծաղել, քրքջալ, կարկաչել, հոհոալ. կամ՝ ուղենալ-ցանկանալ, ըդձալ, փափաղել, տենչալ, պապակել և այլն։ Վերոհիշյալ օրինակներում ամպլիտուդան արտահայտված է երևույթների կամ հատկանիշների աստիճանականության (դրադացիա) շնորհիվ։

Շատ դեպքերում, ինչպես նկատել է Վ. Ֆավորինը, ամպլիտուդայի մեջ աստիճանականությունը ղարդանալով և հասնելով իր դադաթնակետին, այնուհետև սկսում է շաբունակվել ուղիղ դծով. օր. խնդրել, հայցել, թախանձել, աղաչել, աղերսել, պաղատել, աղաչել-պաղատել և այլն։ Որոշ դեպքերում էլ, հոմանիշների շարքի անդամների մեջ կարող են առաջանալ որոշակի բաց կամ աղատ տարածություններ, որով աստիճանականության համաչափությունը որոշ չափով խախտվում է. օր. դեր, պարարտ, հաստ, չաղ, ցմփոր, կամ՝ հարուստ-ունևոր, երևելի, մեծահարուստ, մեծատուն, կրեսոս և այլն։

Ամպլիտուդան, սակայն, միայն աստիճանականությամբ չի արտահայտվում, այլև հոմանիշների շարքի մեջ մտնող բառերի իմաստային, ինչպես նաև ժանրային և ոճական այլևայլ տարբերություններով. օր. խիղախ-արի. սպիտակ-ճերմակ. համեմատել-բաղդատել և այլն։ Ամպլիտուդայի շնորհիվ հիմնականում արտահայտվում են հոմանշային շարքի հետևյալ առանձնահատկությունները։

---

[4] В. К. Фаворин, Синонимы в русском языке, Свердловск, 1953, էջ 19—20։

ա) Հոմանիշների շարքում հարևան անդամները իմաստով ավելի մոտ են. օր. ընկեր-ընկերակից, մտերիմ, համախոհ, համամիտ կամ՝ միապետ-միահեծան, վեհապետ, ինքնակալ, թագավոր, արքա, կայսր, շահ, ցար և այլն։

բ) Հոմանիշների շարքում գլխաբառից հեռացած բառերը իրենց իմաստով այնքան են շեղվում նրանից, որքան որ նրանք հեռու են գտնվում. օր. մնացորդ-մնացուկ, ավելցուկ, կոճոն, թերմացք (ուտելիքի), թափուկ, տականք, տակուցք, տակուք, թափոն, թափթփուկ, թափթփանք, փշուրք, փշրանք, փշրտուք, մանրուք. տակումակ (հացահատիկի) և այլն։

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, հոմանիշների այսպես կոչված ամպլիտուդան, փաստորեն, հոմանիշների շարքի ներքին կառուցվածքի մի քանի առանձնահատկությունների դրսևորումն է։

Մինչև այժմ հոմանիշների շարքերը և ընդհանրապես բառերի ու դարձվածաբանական միավորների հոմանշային կապերը քննվում էին հիմնականում ըստ նրանց իմաստային և ոճական առանձնահատկությունների։ Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում այդ կապերը դիտել բառային և դարձվածաբանական միավորների ձևաբանական և բառակազմական հատկանիշների հիման վրա։ Այդ ուղղությամբ, հատկապես ըստ բառերի ձևաբանական հատկանիշների, ռուսերենի հոմանիշ զույգերի տիպերը առաջին անգամ առանձնացրել է Օ. Ս. Ախմանովան[5]։

Հայոց լեզվի հոմանիշներն ևս իրենց ընդհանրությունների հետ միասին տարբերվում են կառուցվածքային և նյութական որոշակի առանձնահատկություններով։ Հայերեն հոմանիշների նման համագրական ուսումնասիրության ժամանակ, բնականաբար, մենք ուշադրություն ենք դարձրել ձևաբանական, բառակազմական և կառուցվածքային հատկանիշներին։ Ըստ այդմ՝ նկատվում են հոմանիշների զույգերի հետևյալ հիմնական տիպեր։

ա) Հոմանիշների շարքեր, որոնք իրենց կազմում չունեն ոչ մի ընդհանուր արմատական ձևույթներ կամ այդ ձևույթներով կազմված բառեր. այսինքն՝ այդ շարքերը կազմված են տարբեր հիմնական ձևույթներից կամ բառերից. օր. սավառնակ-ինքնաթիռ, պոչ-ձետ, ագի, տտուն, խնդրել-հայցել, աղաչել, պաղատել, թախանձել, աղերսել. կամ՝ աշխույժ-զվարթ, կայտառ, առույգ, ժիր, եռանգուն, կենսախինդ, խանդավառ, թովուն և այլն։ Տարարմատ հոմանշային շարքերի առաջացման նախապայմանը հոմանշային հարաբերությունների իմաստաբանական չափանիշն է, այսինքն՝ ստուգաբանորեն տարբեր արմատներից կամ հիմնական ձևույթներից կազմված բառերի իմաստների մոտությունը կամ նույնությունը։

բ) Հոմանիշների զույգեր կամ շարքեր, որոնց մեջ մտնող բառերը կազմված են մեկ ընդհանուր և մեկ տարբեր (ոչ նման) հիմնական (արմատական) ձևույթներից. օր. միահամուռ-միաձայն. բարեգործ-բարեխնամ. շահախնդիր-շահասեր-շահամոլ. արվեստաբան-արվեստագետ, գաղափարաբան-գաղափարախոս և այլն. կամ՝ անտառահավ-մայրահավ, ցախահավ և այլն։ Այս կարգի հոմանշային զույգերում կամ շարքերում հնչյունական կազմով ընդհանուր ձևույթների հետ հոմանշային կապերի մեջ են մտնում նաև հնչյունական կազմով տարբերվող ձևույթները։

[5] Օ. Ս. Ахманова, Очерки по общей и русской лексикологии, М., 1957, էջ 230—232։

գ) Հոմանիշների զույգեր կամ շարքեր, որոնք կազմված են նույն հիմնական (արմատական) ձևույթներից և տարբեր բառակազմական ձևույթներից (ածանցներից) բաղադրված բառերից, որոնց ածանցների ընդհանուր իմաստները, սակայն, ունեն իմաստային որոշակի առնչություններ. օր. ապօրինի-անօրինական, հակօրինական. նախադուշակել-կանխադուշակել. ազատաբար-ազատապես, ազատորեն. կարմիր-կարմրաժեռ, կարմրավետ, կարմրավուն կարմրորակ. դժնդակ-դժնի, դժնյա, քարե-քարյա, քարեղեն. դժգոհ-անդոհ, անհաճո-տհաճ և այլն։

դ) Հոմանիշների զույգեր կամ շարքեր, որոնց անդամներից մեկը պարզ բառ է, մյուսը՝ նույն ձևույթից կազմված ածանցավոր բառ. օր. արագ-արագաբար. արագորեն, դանդաղ-դանդաղաբար, դանդաղորեն, տուն-տնակ, դժվար-դժվարին և այլն։

ե) Հոմանիշների զույգեր կամ շարքեր, որոնք կազմված են նույն բառակազմական, երկրորդական ձևույթներից (ածանցներից) և տարբեր, բայց իմաստային առնչություններ ունեցող հիմնական ձևույթներից բաղադրված բառերից. օր. անհոգ-անվույթ, անճիգ, անջանք, անաշխատ. անվարձ-անվճար, անհատույց (ձրի). անփող-անստակ, անդրամ և այլն։ Նույնածանց հոմանիշների շարքերը կամ զույգերը նույնպես կազմվում են մոտ կամ նույն իմաստ ունեցող գլխավորապես տարարմատ, երբեմն նաև նույնարմատ հիմնական ձևույթների ածանցման հիման վրա։ Սրանց հոմանշության գործում հիմնական դերը ոչ թե ածանցների նույնությանն է պատկանում, այլ հիմնական ձևույթների միջև հաստատված հոմանշային-իմաստային կապերին։

զ) Հոմանիշների զույգեր կամ շարքեր, որոնք կազմված են հոմանիշ բառակազմական, երկրորդական ձևույթներից (ածանցներից) և նույնարմատ կամ նույն կամ մոտ իմաստ ունեցող հիմնական ձևույթներից բաղադրված բառերից. օր. անջերմակայուն-անջերմադիմացկուն, անջրաթափանց-անջրանցիկ, անշահ-անշահեկան, անշահավետ, անօգուտ, անօգտավետ. ճշտաբար, ճշտապես, ճշտորեն և շիտակաբար, շիտակապես, շիտակորեն, կամ՝ վերստին-կրկին, ցարդ-ցայժմ և այլն։

Տվյալ դեպքում հոմանշության համար հավասարապես դեր են խաղում և հիմնական և երկրորդական ձևույթների իմաստների ինչպես նույնությունը, այնպես էլ հոմանշությունը։

է) Հոմանիշների զույգեր կամ շարքեր, որոնց անդամներից մեկը կազմում է մյուսի բաղադրիչներից մեկը, օր. ճաղ-անվաճաղ, փակոց-արգելափակոց, լար-հաղորդալար, դեմ-ընդդեմ, հակընդդեմ, դեռ-դեռևս և այլն։

ը) Հոմանիշների զույգեր կամ շարքեր, որոնք կազմված են կապակցությունների և դրանց համապատասխան բարդությունների կամ հապավումների նույնանիշներից, օր. բնակվարձ-բնակարանային վարձ, հրամկազմ-հրամանատարական կազմ, հրետագունդ-հրետանային գունդ և այլն։

Ըստ առանձին խոսքի մասերի կամ խոսքի մասային քերականական կարգի պատկանելիության, հայոց լեզվի բառային կազմում որոշակի հարաբերություն գոյություն ունի դրանց հարաբերակցության հետ։ Գոյականների, ածականների, բայերի, մակբայների հոմանիշները մոտավորապես համապատասխանում են լեզվի բառային կազմում այդ խոսքի մասերի հարաբերակցությանը։ Հայերենում համեմատաբար սակավ են թվականներով կազմված շարքերը։

Այսպիսով, իրենց բառա-քերականական առանձնահատկությունների, ինչպես նաև կառուցվածքի տեսակետից բառային հոմանիշների շարքերը հիմնականում բաժանվում են՝ ա) տարարմատ հոմանիշների շարքեր կամ զույգեր, բ) նույնածանց հոմանիշների շարքեր կամ զույգեր, գ) նույնարմատ հոմանիշների շարքեր կամ զույգեր և դ) հոմանիշ ածանցներով կազմվող հոմանիշների շարքեր կամ զույգեր։

Կազմության տեսակետից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նույնարմատ հոմանիշների շարքերը կամ զույգերը։ Դրանք հիմնականում նույն արմատից կազմվող բարդություններն ու ածանցումներն են։ Ըստ կազմության դրանք ածանցավոր, բարդ և բարդածանցավոր բառեր են։ Հայոց լեզվում այդ կարգի հոմանիշների առատության պատճառը, անտարակույս, հայերենի ածանցման և բառաբարդման հարուստ հնարավորություններն են։ Նույնարմատ հոմանիշների զույգերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ՝

ա) Նույնարմատ բարդություններով կազմված հոմանիշների շարքերի կամ զույգերի ընդհանուր, նույն բաղադրիչից բացի, բարդության տարարմատ մյուս բաղադրիչները նույնպես հոմանշային կամ իմաստային մոտ կապերի մեջ են գտնվում, ինչպես օր. անտառահավ և մայրահավ (անտառ և մայրի), անտառահատ և ծառահատ (անտառ և ծառ). կամ՝ արվեստաբան և արվեստագետ (բան և գետ) և այլն։ Այս կարգի հոմանիշ զույգերի ոչ ընդհանուր բառերի կամ ձևույթների հարաբերությունները իրար նկատմամբ պարտադիր չէ, որ բոլոր դեպքերում նույնպես հոմանշային լինեն։ Հիմնականը, բարդության ընդհանուր, ամբողջական բառային իմաստն է, երբ հոմանշային կապեր են հաստատվում նույն կազմության, ընդհանուր բաղադրիչով կազմված բարդ բառի հետ։

բ) Նույնարմատ ածանցյալ բառերով կազմված հոմանիշների շարքերի կամ զույգերի մեջ այդ ընդհանուր արմատների կամ հիմնական ձևույթների հետ դրանց մեջ հոմանշային կապերը ստեղծվում են բառակազմական երկրորդական ձևույթների՝ ածանցների հոմանշության շնորհիվ, ինչպես՝ անբախտ-դժբախտ, անգոհ-դժգոհ, բնականաբար-բնականապես, բնականորեն և այլն։ Նույն հարաբերությունների արդյունք են նաև նույնարմատ բարդ ածանցավոր բառերից կազմվող հոմանիշների շարքերը կամ զույգերը։

գ) Իմաստաբանական տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում հոմանիշների այն շարքերը կամ զույգերը, որոնց անդամներից մեկը կազմում է մյուսի բաղադրիչը, ինչպես՝ ճաղ-անվաճաղ, փակոց-արգելափակոց, խաղ-դերախաղ և այլն։ Այս զույգերում արդեն, ըստ երևույթին, իմաստային տեսակետից հաստատվել են ընդհանուրի և մասնավորի հարաբերություններ, որտեղ հոմանշային զույգի առաջին բառերը հասկացության ընդհանուր գաղափարն են արտահայտում և միաժամանակ նրանք բազմիմաստ են, իսկ զույգի երկրորդ՝ հոմանիշ համապատասխան բառերը մենիմաստ են և այդ իմաստով էլ ավելի նեղ և կոնկրետ հարաբերության մեջ են գտնվում իրենց համապատասխան հոմանիշ բառի նկատմամբ։

Հոմանիշների շարքերում իրենց արտահայտությունն են գտնում նաև հայերենի բառակազմական այլ առանձնահատկություններ։ Այդ տեսակետից առանձնապես հետաքրքրություն են ներկայացնում բառերի բառակազմական տիպերի զուգահեռները, որոնք արտահայտվում են նույնատիպ բառաբարդում-

ների և ածանցումների ձևերով, ինչպես օրինակ՝ դատարկաբան-դատարկախոս, զրաբան, դրախոս, ունայնաբան, ունայնախոս, նաներաբան, նաներախոս և այլն. կամ՝ դետափ-զետեզր. դատարկազի-սնազի (կազմախոսական). կամ՝ թափառաշրջիկ-դատարկաշրջիկ, կրոնափոխ-դավանափոխ, հավատափոխ, կարմրավուն-կարմրաժեռ-կարմրորակ և այլն։

Քննության ենթարկելով հայերենի հոմանիշների շարքերը՝ ըստ նրանց կազմության առանձնահատկությունների, իմաստային ու ոճական, ինչպես նաև ձևաբանական և բառակազմական հատկանիշների, հուսով ենք, որ հետագա ուսումնասիրողները առաջ կքաշեն նորանոր խնդիրներ և ավելի հստակություն կմտցնեն արծարծված հարցերի մեջ։

СИНОНИМИЧЕСКИЙ РЯД В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. М. СУКИАСЯН

Резюме

В данной статье рассматриваются теоретические вопросы синонимического ряда и некоторые его особенности в армянском языке. По количественному признаку они делятся на двучленные и многочленные.

По своей структуре синонимы составляют простые и сложные ряды, которые образуются из: а) собственно литературных синонимов; б) слов-синонимов восточноармянского и западноармянского литературных языков; в) литературных и заимствованных слов-синонимов; г) литературных и диалектных синонимов.

Исследуются синонимические ряды, образовавшиеся из абсолютных и идеографических синонимов. Одновременно, синонимические связи слов и фразеологических единиц рассматриваются, в основном, с точки зрения их семантических и стилистических особенностей, а также по морфологическим и словообразовательным признакам.